ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

375026 ք.Երևան, Գ.Նժդեհի 23
հեռախոս՝ 44-71-21-220

28 10 2008թ.

N ԴԴ-9- 5917

Դավիթ Մաթևոսյանի լիազոր ներկայացուցիչ
Արտակ Զեյնալյան
/ք. Երևան, Հանրապետության 78, բն. 19/

Ձեզ է ուղարկվում ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2583/05/08 վարչական գործով վճիռը:

ԴԱՏԱՎՈՐ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ՕԳՆԱԿԱՆ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վարչական գործ թիվ ՎԴ/2583/05/08

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

27 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
նախագահությամբ՝ դատավոր Ռ.Հակոբյանի

քարտուղարությամբ՝ Լ.Խոստիկյանի
մասնակցությամբ՝
հայցվոր՝ Դավիթ Մաթևոսյան /ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանի/
պատասխանող՝ Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյան
/ներկայացուցիչ Դ. Ազիզյանի/

2008թ. հոկտեմբերի 13-ին, դռնբաց դատական նիստում, քննելով վարչական գործն ըստ հայցի Դավիթ Մաթևոսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանի՝ Երևանի քաղաքապետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վարչական վարույթի նյութերին ծանոթանալու և իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու հնարավորություն տալուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվոր Դավիթ Մաթևոսյանը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել Երևանի քաղաքապետի անգործությունը և վերջինիս պարտավորեցնել հնարավորություն տալ վարչական վարույթի նյութերին ծանոթանալու և իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու:

1.Հայցվորի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

Դավիթ Մաթևոսյանը 28.01.2008թ Երևանի քաղաքապետին երեք իրազեկում է ներկայացրել 08.02.2008թ. 16.02.2008թ. և 17.02.2008թ. զանգվածային հրապարակային միջոցառում կազմակերպելու վերաբերյալ: Դրանցից երկուսի վերաբերյալ կայացվել են իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումներ, երրորդի վերաբերյալ՝ վարչական ակտ չի կայացվել: Երևանի քաղաքապետից զանգվածային հրապարակային միջոցառման կազմակերպիչը խնդրել է թույլատրել ծանոթանալ զանգվածային հրապարակային միջոցառուների իրազեկումների հիման վրա 2008թ. հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների գործերին, դրանց նյութերին և իր հայեցողությամբ դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ: Երևանի քաղաքապետը դիմումին չի արձագանքել:

Հայցվորի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը 2008թ. փետրվարի 3-ին թիվ 143 դիմում է հղել Երևանի քաղաքապետին, որը Երևանի քաղաքապետարանի քարտուղարություն է մուտքագրվել 04.02.2008թ. ժամը 12^{01} րոպեին /գրանցման համար՝ 2039, բանալի՝ 80080/:

Նշված դիմումով հայցվորի ներկայացուցիչը քաղաքապետին հայտնել է հետևյալը. «Վստահորդս և Նիկոլ Փաշինյանը ՀՀ Նախագահի 2008 թվականի փետրվարի 19-ին կայանալիք ընտրություններում ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական քարոզչության համատեքստում 28.01.2008թ. երեք իրազեկում են ներկայացրել զանգվածային հրապարակային միջոցառում կազմակերպելու վերաբերյալ՝ 08.02.2008թ. 16.02.2008թ. և 17.02.2008թ: Դրանցից երկուսի վերաբերյալ կայացվել են իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումներ, երրորդի վերաբերյալ՝ վարչական ակտ չի կայացվել ...»:

Նույն դիմումով հայցվորի ներկայացուցիչը քաղաքապետին խնդրնել է թույլատրել ծանոթանալ զանգվածային հրապարակային միջոցառումների իրազեկումների հիման վրա սույն թվականի հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների գործերին, դրանց նյութերին և իր հայեցողությամբ դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվացքներ:

Երևանի քաղաքապետը թիվ 143 դիմումին չի պատասխանել:

Երևանի քաղաքապետը հնարավորություն չի տվել (ընձեռել) ծանոթանալ զանգվածային հրապարակային միջոցառումների իրազեկումների հիման վրա 2008թ. հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների գործերին, դրանց նյութերին և իր հայեցողությամբ դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին: Վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հնարավորությունը պետք է տրվի համապատասխան դիմումը ներկայացնելու օրվանից երեք օրվա ընթացքում:

Վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերից կարող են կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ:

ՀՀ վարչական դատարանը 2008 թվականի մարտի 21-ի «Լևոն Տեր– Պետրոսյանն ընդդեմ ՀՀ Երևան քաղաքի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի՝ Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի 2008թ. մարտի 11-ի «Միջոցառման անցկացումն արգելելու մասին» թիվ 20 որոշումը ամբողջությամբ վերացնելու, ... պահանջի մասին» ՎԴ-2221/05/08 վարչական գործով հղում կատարելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 39-ին՝ հանգել է հետևյալ իրավական դիրքորոշման. «...Վարչական դատարանը գտնում է, որ վարչական վարույթի արձանագրությունը հանդիսանում է վարչական վարույթի նյութ և դրան ծանոթանալը հնարավոր է օրենքով սահմանված կարգով, ինչը չի կատարվել հայցվորի կողմից: Նման պայմաններում, ի պատասխան հայցվորի բանավոր պահանջի, արձանագրությունը չտրամադրելը, չի կարող ճանաչվել որպես վարչական մարմնի կողմից օրենքի պահանջի խախտում»:

ՎԴ-2221/05/08 վարչական գործով հայցվորը պահանջել էր ոչ իրավաչափ ճանաչել Երևանի քաղաքապետարանի լիազոր ներկայացուցչի կողմից իրազեկման նիստի գրավոր արձանագրությունը հայցվորի ներկայացուցչին չտրամադրելը: Լսումների ժամանակ, ինչն արձանագրվել է ձայնագրիչ սարքի օգնությամբ և որպես իրեղեն ապացույց կցված է գործին, հայցվորը Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչին բանավոր խնդրանք էր ներկայացրել՝ տրամադրել լսումների գրավոր արձանագրության պատճենը: Վարչական դատարանը գտել է, որ լսումների կամ, որ նույնն է՝ վարչական վարույթի արձանագրությանը, հնարավոր է ծանոթանալ ոչ բանավոր, այսինքն՝ գրավոր դիմում ներկայացնելուց հետո:

Թիվ 143-րդ դիմումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի և ՎԴ-2221/05/08 վարչական գործով ՀՀ Վարչական դատարանի իրավական դիրքորոշման իմաստով՝ գրավոր դիմում է վարչական վարույթի նյութերին ծանոթանալու մասին, ուստի Երևանի քաղաքապետը, այն քաղաքապետարանի քարտուղարություն մուտքագրվելուց հետո, եռօրյա ժամկետում պարտավոր էր («պետք է») կատարել գործողություն՝ հնարավորություն տար ծանոթանալու վարչական վարույթի նյութերին: Մինչդեռ Երևանի քաղաքապետը չի կատարել օրենքով նախատեսված գործողությունը, հետևաբար ցուցաբերել է անգործություն, որը ոչ իրավաչափ է:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը, վերը շարադրված փաստարկներն ամբողջությամբ պնդելով, խնդրեց Երևանի քաղաքապետի անգործությունը ճանաչել ոչ իրավաչափ և Երևանի քաղաքապետին պարտավորեցնել հնարավորություն տալ ծանոթանալու վարչական վարույթի նյութերին և իր հայեցողությամբ դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվացքներ:

2. Պատասխանողի ներկայացուցչի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը հայցի դեմ առարկում է ամբողջությամբ հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորումներով:

Սույն վարչական գործի շրջանակներում հայցվորի կողմից պահանջվող վարչական վարույթի նյութերը վերաբերում են «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն սույն թվականի հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում զանգվածային հրապարակային միջոցառումների իրազեկումների հիման վրա Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների գործերի նյութերին ծանոթանալու հայցվոր Դավիթ Մաթևոսյանի կողմից Երևանի քաղաքապետարան 28.01.2008թ. մուտքագրված զանգվածային հրապարակային միջոցառում իրականացնելու վերաբերյալ ներկայացված իրազեկումների քննարկման նյութերի տրամադրմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1–ին մասի ,,ա,, կետի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությանը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին:

Սույն վարչական գործով հայցվորի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը, 03.02.2008թ. թիվ 143 գրությամբ դիմելով Երևանի քաղաքապետարան, խնդրել է թույլատրել ծանոթանալ զանգվածային հրապարակային միջոցառումների իրազեկումների հիման վրա ս.թ. հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում ընդհանրապես Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների գործերին, դրանց նյութերին և իր հայեցողությամբ դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ:

Երևանի քաղաքապետարան հասցեագրված դիմումից ակնհայտ է, որ հայցվորի ներկայացուցիչը խնդրել է ծանոթանալ ոչ թե իր դիմումի հիման վրա հարուցված վարչական վարութի նյութերին, այլ 2008 թվականի հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի կողմից հարուցված վարչական վարույթների գործերին:

Հայցվորի կողմից ներկայացված խնդրանքը վերաբերում է ոչ թե իր մասնակցությամբ հարուցված վարչական վարույթի նյութերին, այլ այնպիսի վարչական վարույթների, որոնց մասնակից հայցվոր կողմը չի հանդիսացել: Նման հանգամանքներում հայցվորի կողմից դատարանին ներկայացված պահանջը չի բխում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հողվածի դրույթներից:

Հայցվորի ներկայացուցչի կողմից ՀՀ վարչական դատարանի 21.03.2008թ. թիվ ՎԴ-2221/05/08 վարչական գործով կայացված վճռին հղում կատարելը և այն որպես հայցապահանջի իրավական հիմնավորում նշելը որևէ կերպ հիմնավորված չէ և չի կարող հիմք հանդիսանալ հայցապահանջի բավարարման համար, ինչպես նաև այդ փաստը էական նշանակություն չունի գործի լուծման համար:

Վկայակոչելով «Վարչարարության հիմուքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոված դրույթները՝ խնդրեց Դավիթ Մաթևոսյանի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանի հայցը մերժել:

Պատասխանելով դատարանի հարցերին պատասխանողի ներկայացուցիչն ընդունեց, որ հայցվորի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանի կողմից Երևանի քաղաքապետին 2008թ. փետրվարի 3-ին հասցեագրած թիվ 143 դիմումին պատասխան չի տրվել:

<u>3.Հայցվորի ներկայացուցչի առարկությունները պատասխանողի ներկայացրած փաստերի վերաբերյալ.</u>

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի՝ առարկելու դեպքում դիրքորոշումը պետք է անդրադարձ կատարի հետևյալ հարցերին.

1) հայցի հիմքում ընկած այն փաստերը, որոնք նա չի ընդունում.

2) նշում այն մասին, թե արդյոք հայցվորի ներկայացրած փաստերը էական նշանակություն ունեն գործի լուծման համար.

3) այն փաստերը, որոնք ընկած են առարկությունների հիմքում, և այն ապացույցները, որոնք հաստատում են այդ փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված....:

Հայցի հիմքում ընկած փաստերը, շարադրված են հայցադիմումի 2.1.–2.6. կետերում, սակայն պատասխանում անդրադարձ կատարված չէ 2.1.-2.6. կետերում շարադրված փաստերը չընդունելու հանգամանքին, պատասխանում չկա նշում այն մասին, թե արդյոք 2.1.-2.6. կետերում ներկայացրած փաստերը էական նշանակություն ունեն գործի լուծման համար, թե ոչ, պատասխանում բերված չեն այն փաստերը, որոնք ընկած են առարկությունների հիմքում, և այն ապացույցները, որոնք հաստատում են այդ փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված:

Պատասխանողը փաստորեն ընդունում է հայցի 2.1.–2.6. կետերում շարադրված փաստերը, այդ թվում՝ այն, որ Երևանի քաղաքապետը թիվ 143 դիմումին չի պատասխանել:

Պատասխանողն իր առարկությունները կառուցել է իրավունքի ինքնատիպ և ոչ իրավական պետությունների քաղաքապետերին ներհատուկ մեկնաբանությունների վրա:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական

և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ փնտրելու, ստանալու ազատության իրավունք:

Թիվ 143 դիմումում պարտադիր չէր ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների մասին հիշատակելը, որպեսզի պաշտոնատար անձի կողմից դրանք հարգվեին: Պաշտոնատար անձանց՝ իրենց պաշտոնում նշանակվելու համար պարտադիր պայման է այն, որ նրանք իմանան ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, և, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով, որպես անմիջականորեն գործող իրավունք:

Այն տեղեկությունները և իրավական ակտերը, որոնք հայցվորի կողմից փնտրվում են՝ գաղտնիք չեն պարունակում և ժողովրդավարական հասարակությունում չկա որևէ հիմք դրանց մատչելիությունը սահմանափակելու համար:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում նա պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

Ինչպես արձանագրում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հեղինակներ Հրայր Թովմասյանը, Գրիգոր Մուրադյանը, Հովհաննես Թորոսյանը, Վահագն Գրիգորյանը, Վարդան Պողոսյանն իրենց՝ «Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի մասին» աշխատության մեջ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները.

1. մեկ միասնական ակտի միջոցով կանոնակարգել վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները.
2. ապահովել վարչարարության հրապարակայնությունը.
3. կանխելվարչական մարմինների կամայականությունները.
4. կանխարգելել կոռուպցիան.
5. ապահովել վարչական մարմինների արդյունավետ աշխատանքը:

Վարչական մարմինների կողմից վարչական վարույթի նյութերին յուրաքանչյուր ցանկացողի ծանոթանալու հնարավորություն տալով է միայն հնարավոր ապահովել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հիմնական նպատակներից առնվազն երեքի իրականացումը՝ վարչարարության հրապարակայնությունը, վարչական մարմինների կամայականությունների կանխումը և կոռուպցիայի կանխարգելումը:

Որևէ վարչական վարույթի մասինակից, որպեսզի իր գործով հնարավորություն ունենա ներկայացնել այլ գործով կայացված վարչական ակտի հիմքում ընկած փաստական հանգամանքները, պետք է հնարավորություն ունենա իր հայեցողությամբ ծանոթանալու ցանկացած վարչական վարույթի գործի: Եթե մարդիկ զրկված լինեին այլ անձանց մասնակցությամբ հարուցված վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հնարավորությունից, ապա նաև հնարավոր չէր լինի ամփոփել իրավակիրառական պրակտիկան ու հանդես գալ օրենսդրական արդյունավետ նախաձեռնություններով և այլն:

Կամայականության արգելքի սկզբունքի էությունը, հիրավի, իրավահավասարության սահմանադրական սկզբունքի (ՀՀ Սահմանադրություն, հոդված 14.1) որոշակիացված արտացոլումն է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում:

Կամայականության արգելքի սկզբունքը տեղ է գտել նաև ՀՀ դատական օրենսգրքում, որի 15-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ, որպես իրավական փաստարկ, իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում օրենքի մեկնաբանությունները):

Նույն օրենսգրքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու դատական գործին, որով գործն ըստ էության լուծող դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ: Գործի՝ դռնփակ նիստում քննված մասին և որդեգրման գործին անձը կարող է ծանոթանալ միայն դատական ակտը կայացրած դատարանի որոշմամբ:

Հայաստանում նույնիսկ դատական գործերը և նույնիկ դռնփակ դատական նիստերի գործերը մատչելի են յուրաքանչյուրին, ուստի վարչական վարույթի գործերին ծանոթանալու հնարավորությունը Սահմանադրությունից բխող իրավունք է և ամրագրված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում:

Հայաստանում դատարանների աշխատակազմերը պրակտիկայում ապահովում են Սահմանադրությունում և ՀՀ դատական օրենսգրքում ամրագրված մարդկանց վերոհիշյալ իրավունքի իրացումը: Օրինակ՝ ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանին 02.10.2007թ ուղղված դատարանի դատավորների կողմից քննված գործերին իր հայեցողությամբ ծանոթանալու թույլ տալու մասին իր խնդրանքը բավարարվել է ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավարի 08.10.2007թ. թիվ ԴԴ11-Ե-532/1 գրությամբ:

Երևանի քաղաքապետին հասցեագրած թիվ 143 դիմումում հայտնել է հայցվորի ՀՀ վարչական դատարան դիմելու մտադրության մասին՝ իրավունք, որը ձևակերպված է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներում:

Պատասխանողն իր անգործությամբ և պատասխանում բերված անգործության արդարացումներով խոչընդոտել և խոչընդոտում է հայցվորի ապացույցներ ձեռք բերելու իրավունքի իրացմանը: Հայցվորը պատրաստվում է գանգատ ներկայացնել Մարդու իրավունքների Եվրոպական դատարան և այս հանգամանքը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից կարող է դիտվել որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի հոդված 34-ի խախտում, որում ասված է. «Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որեէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը»:

Վերոգրյալից հետևում է, որ պատասխանը ներկայացված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի խախտմամբ, այն անհիմն է, ուստի հայցը պնդում է:

Լսելով կողմերի բացատրությունները, հետազոտելով ներկայացված գրավոր ապացույցները և դրանցից յուրաքանչյուրը գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը եզրակացրեց, որ հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

4. Դատաքննությամբ պարզված հանգամանքները.

- հայցվորի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը 2008թ. փետրվարի 3-ին Երևանի քաղաքապետին է հասցեագրել թիվ 143 դիմումը, որը Երևանի քաղաքապետարանում մուտքագրվել 04.02.2008թ. ժամը 12^{01} րոպեին /գրանցման համար՝ 2039, բանալի՝ 80080/.
- դիմումի բովանդակությունը հետևյալն է. «Վստահորդս և Նիկոլ Փաշինյանը ՀՀ Նախագահի 2008 թվականի փետրվարի 19-ին կայանալիք ընտրություններում ՀՀ նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական քարոզչության համատեքստում 28.01.2008թ. երեք իրազեկում են ներկայացրել զանգվածային հրապարակային միջոցառում կազմակերպելու վերաբերյալ՝ 08.02.2008թ. 16.02.2008թ. և 17.02.2008թ: Դրանցից երկուսի վերաբերյալ կայացվել են իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումներ, երրորդի վերաբերյալ՝ վարչական ակտ չի կայացվել: ... Խնդրում եմ թույլատրել ծանոթանալ զանգվածային հրապարակային միջոցառումների իրազեկումների հիման վրա սույն թվականի հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների գործերին, դրանց նյութերին և իմ հայեցողությամբ դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ:
- Երևանի քաղաքապետը թիվ 143 դիմումին չի պատասխանել:

5. Սույն վեճի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը.

- որն է հանդիսանում սույն գործով կիրառման ենթակա օրենսդրությունը.
- առկա է արդյոք Երևանի քաղաքապետի անգործության փաստ, թե ոչ.

- արդյոք սույն թվականի հունվարի 27-30 ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների գործերի նյութերին ծանոթանալու հնարավորություն տալու, իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու վերաբերյալ հայցվող վարչական ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով համարվում է ձեռք բերված:

6. ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Առաջնորդվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում ամրագրված գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքով՝ ՀՀ վարչական դատարանը եզրակացրեց, որ սույն գործով կիրառման ենթակա են ՀՀ Սահմանադրությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքները:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրության վերը նշված հոդվածներով ամրագրված դրույթներով Հայաստանի Հանրապետությունն երաշխավորվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, այդ թվում տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության իրավունքի պաշտպանությունը, ինչն ուղղակիորեն բխում է իրավական պետության սկզբունքից:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց ՀՀ Սահմանադրության վերը նշված հոդվածներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004թ. փետրվարի 18-ին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողությամբ կամ անգործությամբ, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է բացառապես **ընթացքում** գտնվող վարչական վարույթի իրականացման ժամանակ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները, իսկ վարչական վարույթի ավարտից հետո նշված օրենքն այդ հարաբերությունների նկատմամբ դադարում է կիրառելի լինել:

ՀՀ վարչական դատարանը հիմնավոր չի համարում պատասխանողի ներկայացուցչի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի վկայակոչմամբ վարչական վարույթի նյութերին ծանոթանալու, իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու հայցվորի իրավունքի սահմանափակումը, քանի որ նշված հոդվածը տվյալ դեպքի համար կիրառելի չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և **վարչական վարույթի իրականացման ժամանակ** այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին: Վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հնարավորությունը պետք է տրվի համապատասխան դիմումը ներկայացնելու օրվանից երեք օրվա ընթացքում: Վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերից կարող են կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ:

Ակնհայտ է, որ նշված հոդվածը կարգավորում է **ընթացքում** գտնվող վարչական վարույթի իրականացման ժամանակ վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հարցը: Այսինքն՝ կա վարչական վարույթ, կա վարույթի մասնակից, իսկ վարույթի ընթացքն ու վարույթի մասնակցի և վարչական մարմնի հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որը սակայն այդ հարաբերությունների նկատմամբ դադարում է կիրառելի լինել վարչական վարույթի ավարտից հետո: Վարչական վարույթի ավարտից հետո դրանում գտնվող բոլոր նյութերը դառնում են գործի (ավարտված վարույթի) նյութեր և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով հանդիսանում տեղեկատվություն: Թեպետ Երևանի քաղաքապետին հասցեագրած 03.02.2007թ. թիվ 143 դիմումը ներկայացնելիս հայցվորն առաջնորդվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, այդուհանդերձ վարչական մարմինը պարտավոր էր պարզել կիրառման ենթակա օրենքը և դրանով սահմանված կարգով ու ժամկետներում ընդուներ համապատասխան որոշում:

Տվյալ դեպքում Երևանի քաղաքապետին 03.02.2007թ. հասցեագրած թիվ 143 դիմումով հայցվորը խնդրել է թույլատրել ծանոթանալ արդեն իսկ ավարտված զանգվածային հրապարակային միջոցառումների իրազեկումների հիման վրա նույն թվականի հունվարի 27-30-ը ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների գործերին, դրանց նյութերին և իր հայեցողությամբ դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ, հետևաբար նշված իրավահարաբերության նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը կիրառելի չէ, այլ կիրառելի է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը:

Վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հայցվորին հնարավորություն չտալու օրինական լինելը հաստատելու նպատակով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի վկայակոչումը հիմնավոր չլինելու մասին է փաստում նաև դատաքննության ընթացքում այդ նյութերը հայցվորին տրամադրելու պատասխանողի պատրաստակամությունը, ինչը ենթադրում է երկու իրադրություն. նախ՝ եթե նշված հոդվածի համաձայն հայցվորն իրավունք չի ունեցել (չունի) ծանոթանալու պահանջվող վարույթի նյութերին, ապա դատաքննության ընթացքում նյութերը տրամադրելու պատասխանող կողմի պատրաստակամությունն անտրամաբանական է այն պարզ պատճառով, որ այդ հոդվածն ուժը չի կորցրել, հետևաբար նյութերը տրամադրելու պատասխանողի գործողությունները կհակասեն օրենքին, ինչը չի կարող համահունչ լինել վարչական մարմինների գործողություններն օրենքից բխելու ՀՀ Սահմանադրությամբ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներին, երկրորդ՝ եթե պահանջվող նյութերին ծանոթանալու իրավունքը հայցվորն ունեցել է, ուստի Երևանի քաղաքապետը պարտավոր էր բավարարելով թիվ 143 դիմումը հայցվորին հնարավորություն տալ ծանոթանալու այդ նյութերին, ինչը չի արել՝ ցուցաբերելով անգործություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները:

Օրենքի 3-րդ հոդվածում սահմանվել են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, համաձայն որի տեղեկությունը՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի,

իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ), տեղեկատվություն տնօրինողը՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

Տեղեկատվության ազատության սահմանափակումները սահմանված են նույն օրենքի 8-րդ հոդվածով, համաձայն որի տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում սահմանված է գրավոր հարցմանը պատասխան ներկայացնելու ժամկետները, համաձայն որի՝ 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Նույն հոդվածում նախատեսված է, որ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը.

2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը.

3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.

4) սահմանել իր կողմից բանավոր և (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.

5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով իրեն դիմած ցանկացած քաղաքացու տրամադրել հայցվող տեղեկատվությունը՝ եթե առկա չեն օրենքով նախատեսված սահմանափակումներ:

Ակնհայտ է, որ հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվության տնօրինողը հանդիսացել է Երևանի քաղաքապետը, ուստի վերջինս պարտավոր էր օրենքի պահանջների պահպանմամբ հայցվորին տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ հնարավորություն տար վերջինիս ծանոթանալու վարչական վարույթի նյութերին, իր հայեցողությամբ դրանցից կատարելու պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ: Մինչդեռ, վարչական մարմինը, տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանը, ոչ միայն չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, այլև ընդհանրապես հայցվորին չի արժանացրել որևէ պատասխանի, այսինքն ցուցաբերել է անգործություն:

Մինչդեռ վարչարարության հիմնարար սկզբունքների համաձայն, որոնք սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխում, վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը /հոդված 4/, վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր /հոդված 8/:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ):

Նույն օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը»:

Սույն հոդվածի 1-ին մասի "ա" կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, սույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

Սույն գործի փաստերի հիման վրա ՀՀ վարչական դատարանը եզրակացրեց, որ հայցվորի կողմից 2008թ. փետրվարի 3-ին Երևանի քաղաքապետին հասցեագրված թիվ 143 դիմումի հիման վրա վարչական վարույթը համարվել է հարուցված այդ դիմումը Երևանի քաղաքապետարանում մուտքագրվելու օրը, այսինքն 2008թ. փետրվարի 04-ին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից...:

Վարչական մարմինների կողմից անգործություն չցուցաբերելու և վարչական ակտ չընդունելու կանխման, ինչպես նաև վարչական մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բարձրացնելու, վարչական մարմիններից վարչական ակտ հայցող անձանց իրավունքները հետևողականորեն պաշտպանելու նպատակով օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում ամրագրել է 48-րդ հոդվածը, համաձայն որի՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

Վերը նշվածն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության սկզբունքից և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված վարչարարության օրինականության սկզբունքից, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավական պետության սկզբունքից, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ վարչական դատարանի գնահատմամբ Երևանի քաղաքապետը, վերը նշված իրավական ակտերի համաձայն, պարտավոր էր, պահպանելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 18-րդ,

27-րդ, 27.1-րդ հոդվածներով ամրագրված և պաշտպանվող անձի իրավունքները, ինչպես նաև գործելով վարչարարության օրինականության և իրավական պետության սկզբունքների պահպանմամբ, վարչական վարույթի հարուցման օրվանից սկսած, եթե ոչ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում սահմանված հատուկ ժամկետներում, ապա առնվազն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված 30 օրյա ժամկետում ընդունելու նույն օրենքի 53-րդ հոդվածով սահմանված վարչական ակտերից /բարենպաստ, միջամտող, զուգորդվող/ որևէ մեկը, քանի որ այդ պարտավորությունը չկատարելու համար օրենսդիրը սահմանել է դրա հետևանքը, որն ամրագրված է օրենքի 48-րդ հոդվածում:

Մինչդեռ ներկայացված դիմումին, որով հայցվորն ըստ էության խնդրել է ընդունել բարենպաստ վարչական ակտ՝ թույլատրել իրեն ծանոթանալու վարչական վարույթի նյութերին և իր հայեցողությամբ պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու, Երևանի քաղաքապետը որևէ պատասխան չի տվել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատաքննության ընթացքում պատասխանողը չվիճարկեց հայցվորի կողմից 2008թ. փետրվարի 3-ին Երևանի քաղաքապետին հասցեագրված թիվ 143 դիմումին պատասխան չտալու փաստը, դատարանն այն համարում է ապացուցված:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Նշված հոդվածով սահմանված կանոնի համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի մեկնաբանմամբ, դատարանը եզրակացրեց, որ նույն օրենքի 46-րդ հոդվածով երեսունօրյա ժամկետում պատասխան չտալու հետևանքով սույն թվականի հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների նյութերին ծանոթանալու հնարավորություն տալու, իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու վերաբերյալ հայցվող վարչական ակտը, օրենքի 48-րդ հոդվածի ուժով, համարվում է ընդունված, այսինքն՝ նշված վարչական վարույթի նյութերին ծանոթանալու և իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու հնարավորությունը (իրավունքը) համարվում է տրամադրված (ձեռք բերված) և դիմողը, տվյալ դեպքում հայցվորը /ներկայացուցիչը/ կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում ՀՀ վարչական դատարանը եզրակացրեց, որ հայցվորն ունեցել է և ունի ՀՀ Սահմանադրությամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով երաշխավորված Երևանի քաղաքապետին 2008թ. փետրվարի 3-ին հասցեագրած թիվ 143 դիմումին օրենքով սահմանված ժամկետում և կարգով պատասխան ստանալու, իր իրավունքների իրականացման նպատակով առանց սահմանափակման կամ խոչընդոտներ հարուցելու արդեն իսկ ավարտված վարչական վարույթի նյութերին ծանոթանալու և դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ <u>անգործությամբ</u>՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար.

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն...:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ <u>չի կատարել որևէ հայցվող</u>

գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած հանգամանքների ապացուցման բեռը:

Տվյալ դեպքում Երևանի քաղաքապետի անգործության համար հիմք ծառայած հանգամանքների ապացուցման բեռը կրում է Երևանի քաղաքապետը, հետևաբար վերջինս պարտավոր է հիմնավորել, թե Հայաստանի Հանրապետությունում գործող որ իրավական ակտի հիման վրա պատասխան չի ներկայացվել (ցուցաբերվել անգործություն) ՀՀ քաղաքացու դիմումին: Պատասխանողի ներկայացուցիչը դատարանին չներկայացրեց Երևանի քաղաքապետի անգործության համար օրինական հիմք լինելու վերաբերյալ որևէ ապացույց: Ավելին, պատասխանողի ներկայացուցիչն ընդունեց, որ յուրաքանչյուր քաղաքացու դիմումին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պետք է տրվի պատասխան, ինչը տվյալ դեպքում չի կատարվել:

Այսպիսով, դատարանը հաստատված է համարում, որ Երևանի քաղաքապետի կողմից դրսևորվել է անգործություն, որը ոչ իրավաչափ /անվավեր/ է, քանի որ չի բխում ՀՀ Սահմանադրության, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների վերոհիշյալ նորմերի պահանջներից, ուստի այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ,,ա,, կետի հիմքով ենթակա է ոչ իրավաչափ /անվավեր/ ճանաչման:

Վճռի պատճառաբանական մասում բերված հիմնավորումներով ՀՀ վարչական դատարանը եզրակացրեց, որ Երևանի քաղաքապետը պարտավոր է հնարավորություն ընձեռել օրենքի ուժով արդեն իսկ ձեռք բերված իրավունքը հայցվորի կողմից իրականացնելու համար, ինչը հիմք է սույն թվականի հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների նյութերին ծանոթանալու հնարավորություն տալուն և իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելուն Երևանի քաղաքապետին պարտավորեցնելու հայցվորի պահանջը բավարարելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով լուծելով դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցը՝ դատարանը եզրակացրեց, որ Երևանի քաղաքապետից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 4.000 դրամ, որպես վերջինիս կրած դատական ծախսի փոխհատուցում:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 112-115-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Դավիթ Մաթևոսյանի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանի՝ Երևանի քաղաքապետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, վարչական վարույթի նյութերին ծանոթանալու և իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու հնարավորություն տալուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել՝ ոչ իրավաչափ (անվավեր) ճանաչել հայցվորի 2008թ. փետրվարի 3-ին Երևանի քաղաքապետին հասցեագրած թիվ 143 դիմումին չպատասխանելու Երևանի քաղաքապետի անգործությունը, պարտավորեցնել Երևանի քաղաքապետին հնարավորություն տալու հայցվորին ծանոթանալ սույն թվականի հունվարի 27-30-ն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթների նյութերին և իր հայեցողությամբ դրանցից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու:

Երևանի քաղաքապետից հօգուտ հայցվորի բռնագանձել 4.000 դրամ, որպես վերջինիս կրած դատական ծախսի փոխհատուցում:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ռ.ՀԱԿՈԲՅԱՆ